

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի հոկտեմբերի 8-ին

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է բարեգործության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները, սահմանում է բարեգործության կարգավորման իրավական հիմքերը, նպատակները, իրականացման սկզբունքները, պետության կողմից բարեգործությանն աջակցելու ձևերը, բարեգործական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները:

Հոդված 2. Բարեգործության նպատակը

Բարեգործության նպատակն է՝

- 1) աջակցել այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին), ինչպես նաև սակավ ապահովված ընտանիքներին, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց նյութական և հոգևոր պահանջները.
- 2) աջակցել ոչ առևտրային այլ կազմակերպություններին.
- 21) աջակցել առողջապահության զարգացմանը.
- 3) նյութական օգնություն տրամադրել պատերազմի, տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների և արտակարգ այլ իրավիճակների հետևանքով տուժած անձանց և մասնակցել դրանց հետևանքների վերացմանը.
- 4) աշխատատեղերի ստեղծման կամ գործազուրկների վերապատրաստման ճանապարհով աջակցել սոցիալական օգնության կարիք ունեցող գործազուրկներին՝ աշխատանքի տեղավորման հարցում.
- 5) աջակցել գիտության, կրթության, արվեստի, գրականության, առողջապահության, սպորտի և ֆիզկուլտուրայի ոլորտների ծրագրերի իրականացմանը.
- 6) աջակցել պատմական, ճարտարապետական, մշակույթի և արվեստի հուշարձանների պահպանման և վերականգնման ծրագրերի իրականացմանը.
- 7) աջակցել բնության և շրջակա միջավայրի պահպանման և բարեկարգման աշխատանքների իրականացմանը.

8) աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած սոցիալական ծրագրերի իրականացմանը:
(2-րդ հոդվածը լրաց. 11.04.03 ՀՕ-536-Ն)

Հոդված 3. «Բարեգործությունե հասկացությունը

1. Բարեգործությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից սույն օրենքի 2-րդ հոդվածի նպատակների իրականացման համար ֆիզիկական անձանց, առողջապահական և ոչ առևտրային կազմակերպություններին կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված (անհատույց կամ արտոնյալ պայմաններով) նյութական և հոգևոր օգնության (այսուհետ՝ բարեգործական աջակցության) տրամադրումն է:

2. Բարեգործություն չի համարվում կուսակցություններին և առևտրային կազմակերպություններին (բացառությամբ առողջապահության բնագավառի կազմակերպությունների) դրամական և այլ նյութական միջոցների հատկացումը:

(3-րդ հոդվածը փոփ. 11.04.03 ՀՕ-536-Ն)

Հոդված 4. Բարեգործության իրավական կարգավորումը

Հայաստանի Հանրապետությունում բարեգործությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 5. Բարեգործության իրականացման սկզբունքները

Բարեգործության իրականացման սկզբունքներն են՝

- 1) սոցիալական արդարության պահպանումը.
- 2) մարդասիրության ամրապնդումը և տարածումը.
- 3) մարդկային արժանապատվության պահպանումը.
- 4) սերունդների համերաշխության ամրապնդումը.
- 5) սոցիալական հասցեականության պահպանումը.
- 6) սոցիալական խնամառության բացառումը.
- 7) ազգային խտրականության բացառումը:

Հոդված 6. Բարեգործություն իրականացնելու իրավունքը

1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք բարեգործություն իրականացնում են կամավորության և նպատակների ազատ ընտրության սկզբունքով՝ անհատապես կամ համատեղ, անձամբ կամ միջնորդավորված:

2. Արգելվում է սույն օրենքով սահմանված բարեգործության նպատակների և իրականացման ձևերի ընտրության ազատության սահմանափակումը:

Հոդված 7. Բարեգործության մասնակիցները

Բարեգործության մասնակիցներ են բարեգործները, կամավորները, բարեգործություն ստացողները: Բարեգործական կազմակերպությունները կարող են հանդես գալ և՛ որպես բարեգործ, և՛ որպես բարեգործություն ստացող:

Բարեգործության մասնակիցներ (բարեգործներ, բարեգործություն ստացողներ) կարող են լինել նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքները:

Հոդված 8. Բարեգործները

Բարեգործներն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված նպատակներով բարեգործություն են իրականացնում:

Հոդված 9. Կամավորները

Կամավորներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր սույն օրենքի նպատակներից ելնելով՝ կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին:

Հոդված 10. Բարեգործություն ստացողները

Բարեգործություն ստացողներն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք իրենց համաձայնությամբ ստանում են բարեգործական աջակցություն:

Գ Լ ՈՒ Խ 3

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 11. Բարեգործական կազմակերպությունները

1. Բարեգործական կազմակերպությունները ոչ առևտրային այն կազմակերպություններն են, որոնք իրականացնում են սույն օրենքով սահմանված բարեգործական աջակցություն:

2. Բարեգործական կազմակերպության անվանումը պետք է ներառի «բարեգործական» բառը:

3. Բարեգործական կազմակերպություններն ստեղծվում են հասարակական միավորումների, հիմնադրամների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

4. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող լինել բարեգործական կազմակերպության հիմնադիրներ:

Հոդված 12. Բարեգործական կազմակերպության գույքի օգտագործման առանձնահատկությունները

1. Բարեգործական կազմակերպությունները չեն կարող որպես նվիրատվություն ընդունել որևէ գույք՝ ի շահ նվիրատուի օգտագործելու պայմանով:
2. Բարեգործական կազմակերպությունն աշխատակազմի վարձատրության և տնտեսական ծախսերի համար կարող է օգտագործել այդ կազմակերպության կողմից յուրաքանչյուր ֆինանսական տարվա ընթացքում ստացված եկամուտների մինչև 20 տոկոսը, բացառությամբ նվիրաբերությունների տեսքով ստացված այն եկամուտների, որոնց վերաբերյալ բարեգործը սահմանել է այլ պայմաններ:
3. Դրամական նվիրաբերությունների և նվիրատվությունների ոչ պակաս, քան 80 տոկոսը պետք է օգտագործվի բարեգործական կազմակերպության կողմից այդ աջակցությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե բարեգործի կողմից կամ բարեգործական ծրագրով այլ բան նախատեսված չէ: Բնամթերային նվիրաբերությունները և նվիրատվություններն ամբողջությամբ ուղղվում են բարեգործական նպատակների իրականացմանը՝ դրանց պիտանիության ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան դրանք ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ բարեգործի կողմից կամ բարեգործական ծրագրով:
Սահմանված ժամկետներում բարեգործական կազմակերպությունների կողմից դրամական և բնամթերային նվիրաբերություններն ու նվիրատվությունները չօգտագործելու դեպքում դրանց օգտագործման ժամկետները կարող է երկարաձգել լիազորված մարմինը՝ մինչև վեց ամիս ժամկետով:
Բնամթերային նվիրաբերությունների և նվիրատվությունների օգտագործման ժամկետները կարող են երկարաձգվել դրանց պիտանիության ժամկետների սահմաններում:
Նշված ժամկետներում դրամական և բնամթերային նվիրաբերություններն ու նվիրատվությունները չօգտագործելու դեպքում դրանք կարող են բռնագանձվել դատական կարգով: Բարեգործական նպատակով Հայաստանի Հանրապետություն ներկրվող ապրանքները վերագնահատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 13. Բարեգործական ծրագիրը

1. Բարեգործական ծրագիրը ոչ առևտրային կազմակերպության կողմից, սույն օրենքի նպատակներին համապատասխան, որոշակի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների նկարագրությունն է, որը հաստատվում է տվյալ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով:

2. Սույն օրենքով սահմանված բարեգործության նպատակների իրականացմանն ուղղված ծրագրերը որպես բարեգործական որակում և գրանցում է լիազորված մարմինը:
3. Ծրագիրը որպես բարեգործական որակելը և ծրագրի գրանցելը մերժելու մասին լիազորված մարմնի որոշումը բարեգործական ծրագիր ներկայացնողը կարող է բողոքարկել դատական կարգով:
4. Բարեգործական ծրագրում նկարագրվում են ծրագրի նպատակները, նախատեսվող միջոցառումները, նշվում են դրանց կատարողները և ստացողները: Ծրագիրը ներառում է նաև կանխատեսվող մուտքերի և ծախսերի նախահաշիվը, սահմանում է ծրագրի իրականացման փուլերը և ժամկետները:
5. Բարեգործական ծրագրի ֆինանսավորման համար պետք է օգտագործվի ֆինանսական տարվա ընթացքում այդ նպատակով ստացված եկամուտների ոչ պակաս, քան 80 տոկոսը: Երկարաժամկետ (մեկ տարուց ավելի) բարեգործական ծրագիր իրականացնելիս ստացված միջոցներն օգտագործվում են այդ ծրագրով նախատեսված ժամկետներում:

Հոդված 14. Բարեգործական ծախսերը

1. Բարեգործական են համարվում բարեգործական ծրագրերի իրականացման նպատակով կատարվող ծախսերը, կամավորների գործունեության հետ կապված ծախսերը, ինչպես նաև բարեգործական ծրագրերի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը:
2. Բարեգործական ծրագրերի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր են համարվում բարեգործական ծրագրերի իրականացմանը մասնակցող անձանց աշխատավարձը, բարեգործական կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովման և գործուղման հետ կապված ծախսերը, բարեգործական կազմակերպությունների գործունեության մասին հաշվետվության և տեղեկատվության հրապարակման վրա ծախսված միջոցները:

Գ Լ ՈՒ Խ 4

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 15. Բարեգործության խրախուսումը

Հայաստանի Հանրապետությունում բարեգործի և կամավորի գործունեությունը խրախուսելու նպատակով Հայաստանի Հանրապետության Նախագահը շնորհում է հետևյալ կոչումները.

- 1) Հայաստանի Հանրապետության պատվավոր բարեգործ.
- 2) Հայաստանի Հանրապետության պատվավոր կամավոր.
- 3) Հայաստանի Հանրապետության տարվա բարեգործ.
- 4) Հայաստանի Հանրապետության տարվա կամավոր:

Հայաստանի Հանրապետության տարվա բարեգործի կոչմանը կարող է արժանանալ այն բարեգործը, ով բարեգործական նպատակների

իրականացման համար տվյալ տարում տրամադրել է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկ և ավելի չափի արժողությամբ բարեգործական աջակցություն, որը նաև այդ տարում բոլոր բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության արժեքների շարքում ամենաբարձրն է: Հայաստանի Հանրապետության պատվավոր բարեգործի կոչմանը կարող են արժանանալ այն բարեգործները, ովքեր բարեգործական նպատակների իրականացման համար հինգ տարի անընդմեջ ճանաչվել են տարվա բարեգործ:

Հայաստանի Հանրապետության տարվա կամավորի կոչմանը կարող է արժանանալ այն ֆիզիկական անձը, ով որպես կամավոր աշխատել է տարեկան 365 ժամից ավելի, միաժամանակ տվյալ տարում նրա՝ որպես կամավորի աշխատած ժամերի տևողությունը գերազանցում է մնացած բոլոր կամավորների այդ տարում աշխատած ժամերին:

Հայաստանի Հանրապետության պատվավոր կամավորի կոչմանը կարող են արժանանալ այն ֆիզիկական անձինք, ովքեր հինգ տարի անընդմեջ ճանաչվել են տարվա կամավոր:

Բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության և կամավորների կատարած աշխատանքի հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Լիազորված մարմինը կարող է կիրառել խրախուսման այլ ձևեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 16. Աջակցություն բարեգործական ծրագրերին և բարեգործական կազմակերպություններին

1. Հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնությունները լիազորված մարմնի կողմից բարեգործական որակված ծրագրերին տրամադրվում են օրենքով սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համապատասխան համայնքի ավագանու որոշմամբ բարեգործական կազմակերպություններին կարող են ցուցաբերվել նյութատեխնիկական աջակցություն և դրամական օժանդակություն (ներառյալ՝ պետական և համայնքային կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարումից, պետական և համայնքային գույքի օգտագործման վարձավճարից լրիվ կամ մասամբ ազատելը):

Հոդված 17. Բարեգործության պետական պաշտպանությունը

1. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում և ապահովում է բարեգործության մասնակիցների՝ սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց բարեգործություն իրականացնելու իրավունքներին խոչընդոտող պաշտոնատար և այլ անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏԱՄԲ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Բարեգործության իրականացման նկատմամբ վերահսկողությունը

1. Սույն օրենքի պահանջներին բարեգործական կազմակերպության գործունեության համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է լիազորված մարմինը: Բարեգործական կազմակերպությունը լիազորված մարմին է ներկայացնում իր գործունեության մասին տարեկան հաշվետվություն, որը ներառում է տեղեկություններ՝

- 1) կազմակերպության գույքի օգտագործման և միջոցների ծախսման,
- 2) սույն օրենքի պահանջների պահպանումը հավաստող ֆինանսական գործունեության,
- 3) կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի,
- 4) բարեգործական ծրագրերի բովանդակության,
- 5) կազմակերպության գործունեության արդյունքների,
- 6) իրավասու մարմինների կատարած ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների և դրանք վերացնելու համար ձեռնարկված միջոցառումների մասին:

Լիազորված մարմինն իրեն ներկայացված փաստաթղթերի հիման վրա կատարած ուսումնասիրությունների արդյունքում խախտումների հատկանիշներ հայտնաբերելու դեպքում կազմակերպությունում ստուգում անցկացնելու միջնորդությամբ դիմում է իրավասու մարմիններ:

2. Բարեգործական կազմակերպությունները հարկային և լիազորված մարմին տարեկան հաշվետվությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման հաշվետվությունների ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետներում:

3. Բարեգործական կազմակերպություններն իրենց ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունների, ինչպես նաև բարեգործական ծրագրերի իրականացման ընթացքի մասին յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում, տեղեկատվություն են հրապարակում գանգվածային լրատվության միջոցներով:

4. Բարեգործական կազմակերպության կառուցվածքի, դրամական և այլ մուտքերի, գույքի, ծախսերի, աշխատողների թվաքանակի, նրանց աշխատանքի վարձատրության և կամավորների ներգրավման մասին տեղեկությունները չեն կարող համարվել առևտրային գաղտնիք:

Հոդված 19. Բարեգործական կազմակերպության պատասխանատվությունը

1. Բարեգործական կազմակերպության կողմից սույն օրենքի նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու դեպքում լիազորված մարմինը կարող է նրան գրավոր զգուշացնել:

2. Մեկ տարվա ընթացքում մեկից ավելի գրավոր զգուշացումների, ինչպես նաև բարեգործական ծրագրի կատարման ընթացքում օրենքի պահանջների էական խախտումների դեպքում լիազորված մարմինը կարող է չեղյալ ճանաչել տվյալ կազմակերպության բարեգործական ծրագրի՝ որպես բարեգործական որակումը և գրանցումը:

3. Իր գործունեության մասին կեղծ տեղեկություններ ներկայացնելու հետևանքով բարեգործական կազմակերպության չվճարած հարկերը և պարտադիր այլ վճարները ենթակա են բռնագանձման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Լիազորված մարմնի՝ սույն հոդվածով սահմանված գործողությունները բարեգործական կազմակերպությունը կարող է բողոքարկել դատական կարգով:

Գ Լ ՈՒ Խ 6

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հոդված 20. Միջազգային բարեգործության իրականացումը

1. Բարեգործներն իրավունք ունեն իրականացնելու միջազգային բարեգործություն:

2. Միջազգային բարեգործությունն իրականացվում է միջազգային բարեգործական ծրագրեր կազմելու և իրականացնելու, միջազգային բարեգործական կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու, բարեգործության համապատասխան ոլորտում օտարերկրյա, մասնավորապես, սփյուռքահայ գործընկերների հետ համագործակցելու միջոցով, եթե դա չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին:

Հոդված 21. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող բարեգործությունը

Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետությունում բարեգործության մասնակիցներ են համարվում սույն օրենքով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 7

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹ

Հոդված 22. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 3
ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2002 թ. նոյեմբերի 8
Երևան
ՀՕ-424-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2003 թվականի ապրիլի 11-ին

«ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բարեգործության մասին Է Հայաստանի Հանրապետության օրենքի (8 նոյեմբերի 2002 թվականի, ՀՕ-424, այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«21) աջակցել առողջապահության զարգացմանը. Է:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) առաջին մասը «ֆիզիկական անձանց Բառերից հետո լրացնել «, առողջապահական Բառով.

2) երկրորդ մասը «կազմակերպություններին Բառից հետո լրացնել «(Բացառությամբ առողջապահության Բնագավառի կազմակերպությունների) Է Բառերով:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ
Ռ. Քոչարյան

2003 թ. մայիսի 7

Երևան

ՀՕ-536-Ն